

“ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում” *AIR-Q-GOV*

“Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից
բխող արտանետումների քանակների և
ընտրված բնագավառների համար
արտանետումների սահմանային
չափաքանակների մշակում» պիլոտային
ծրագիր

*Հավելված I. Օդի որակի կառավարման ՀՀ գործող
օրենսդրությունը, օրենսդրական համակարգի
ընթացիկ զարգացումները՝ կապված աղտոտման
համալիր կանխարգելման և վերահսկման հետ,
արտանետումների սահմանային չափերի
սահմանման ընթացակարգերը, դրանց
համապատասխանությունը ԵԱՍ 2010/75
Դիրեկտիվի հետ*

2013թ. Մեյստեմբերի 11



This project is funded
by the European Union



And implemented
by a consortium led by MWH

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

**Օդի որակի կառավարման ՀՀ գործող օրենսդրությունը,
օրենսդրական համակարգի ընթացիկ զարգացումները՝ կապված
աղտոտման համալիր կանխարգելման և վերահսկման հետ,
արտանետումների սահմանային չափերի սահմանման
ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը
Եվրամիության Արդյունաբերական Արտանետումների 2010/75
Դիրեկտիվի հետ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	4
1.1. Ընդհանուր դրույթներ.....	4
1.2. Մթնոլորտային օդի պահպանության ոլորտի օրենսդրությունը (օդի որակի կառավարում).....	5
2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....	7
2.1. ԱՀԿՎ-ի ընդհանուր դրույթները.....	8
2.2. Սահմանումներ	8
2.3 Համալիր թույլտվություն.....	19
2.4 Թույլատրելի արտանետումների նորմատիվները.....	22
2.5. Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ.....	23
2.6. Ջերմոցային գազերի արտանետումները.....	25
2.7. Թույլտվության տալու գործընթացում հասարկության մասնակցությունը և տեղեկատվության հասանելիությունը	26
3. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ N 2010/75/EC ԴԻՐԵԿՏԻՎԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	28
4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	29
5. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2010/75/EU ԴԻՐԵԿՏԻՎԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՅԻ	
6. ՄՇԱԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ	32

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Հապավումների ցանկը

ԱԱԴ- Արդյունաբերական արտանետումների Դիրեկտիվ (2010/75/EU)

ԱՀԿՎ- Աղտոտվածության համալիր կանխարգելում և վերահսկում

ԼՀՏ-Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ

ՇՄ-Շրջակա միջավայր

ԱՆ-Աղտոտող նյութ

ՇՄԱԳ- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՍԹԿ-Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՍԹԱ- Սահմանային թույլատրելի արտանետում

ԹՄԱ - Թույլատրելի սահմանային արտահոսք

ԱԹՄ- Արտանետումների թույլատրելի մակարդակ

ԲՆ- Բնապահպանության նախարարություն

ՀՀ- Հայաստանի Հանրապետություն

ՕՊՕ- Օդի պահանջվող օգտագործում

ՋԳ- Ջերմոցային գազեր

ԱՍԱ- Արտանետումների սահմանային արժեքներ

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

1. ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ընդհանուր դրույթներ

Անկախության ձեռքբերումից հետո, Հայաստանում սկսվեց ակտիվ գործունեություն օրենսդրության ձևափոխման ուղղությամբ և ի թիվս առաջին օրենսդրական ակտերի, 1991 թվականի հուլիսի 9-ին ընդունվեց «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները» ՀՀ օրենքը:

90-ական թվականների սկզբին, ընդունվեցին շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման հարցերը կարգավարող հիմնական օրենքները, այդ թվում նաև 10.11.1994 թվականին՝ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը:

1995 թվականին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որի 10-րդ կետը սահմանում է՝ «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը»:

Քաղաքական և տնտեսական ձևափոխումների ընթացքում զուգահեռ կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ օրենսդրության մեջ, մինչ այդ 2000 թվականի սկզբներին, որոշ օրենքներ կրկին ընդունվեցին: Բնապահպանության ոլորտում իրավական դաշտի ձևավորումից հետո, 2006 թվականին «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները» ՀՀ օրենքը ուժը կորցրած ճանաչվեց:

Ստորև ներկայացված է Հայաստանի հիմնական էկոլոգիական օրենսդրական ակտերի ցուցակը՝

Աղյուսակ 1.

<i>N</i>	<i>Օրենսդրական ակտի անվանումը</i>	<i>Ընդունման տարեթիվը</i>
1	Հողային օրենսգիրք	02.05.2001
2	Զրային օրենսգիրք	04.06.2002
3	Անտառային օրենսգիրք	24.10.2005
4	Ընդերքի մասին օրենսգիրք	28.11.2011
5	Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք	10.11.1994
6	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենք	20.11.1995
7	Բուսական աշխարհի մասին օրենք	23.11.1999
8	Կենդանական աշխարհի մասին օրենք	03.04.2000
9	Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք	27.11.2006
10	Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին օրենք	28.12.1998
11	Թափոնների մասին օրենք	24.11.2004
12	Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին օրենք	27.11.2006

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

1.2. Մթնոլորտային օդի պահպանության ոլորտի օրենսդրությունը (օդի որակի կառավարում)

Մթնոլորտային օդի որակի կառավարումը հիմնված է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի և օրենքի կիրարկումն ապահովող երթաօրենսդրական ակտերի վրա: Օրենքը սահմանում է պետական կառավարման մարմինների և տարածքային ինքնակառավարման մարմինների պարտավորությունները՝ մթնոլորտային օդի պահպանման ոլորտի, ինչպես նաև վնասակար նյութերի արտանետումների կառավարման հարցերում:

Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող օբյեկտների պետական հաշվառումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված կարգով:

Օրենքն ընդունվել է 11.10.1994-ին, որից հետո ընդունվել են դրա վերաբերյալ որոշակի փոփոխություններ և լրացումներ, որոնցից ամենակարևորը հանդիսանում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որն ընդունվել է 14.09.2011-ին, և որում սահմանվում է նվազագույն սահմանաչափը՝ արտանետումների աղբյուրների կարգավորման համար:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36 հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ընդունեց 22.04.1999-ին N 259 որոշումը, որով հաստատվեց մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը:

Համաձայն այս որոշման պետական հաշվառման ենթակա են բոլոր այն արտանետման անշարժ աղբյուրները, որոնց համար «օդի պահանջվող օգտագործման» (ՕՊՕ) արժեքը տարեկան կտրվածքով գերազանցում է 200 մլն. խոր. մ:

Համաձայն կառավարության որոշման (N259 22.04.1999)՝ մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող՝ պետական հաշվառման ենթակա օբյեկտներ ունեցող կազմակերպությունները պարտավոր են համապատասխան կարգով իրականացնել իրենց փաստացի արտանետումների հաշվառում և ամեն տարի ներկայացնել այդ արտանետումների որակական և քանակական բաղադրության մասին հաշվետվությունը ՀՀ բնապահպանության նախարարություն:

Օդի որակի կառավարման ոլորտի ենթաօրենսդրական ակտեր

- ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին » 22 ապրիլի 1999 թվականի N 259 որոշումը:
- ՀՀ կառավարության «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների, ՄԹԿ) նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձ գազերում վնասակար նյութերի

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

պարունակության սահմանային թույլատրելի նորմերի հաստատման մասին>> 02.02.2006թ, N160 որոշումը

- ՀՀ կառավարության <<Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կարառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953 –ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2012թ. դեկտեմբերի 27-ի N1673 որոշումը:

Վերջին որոշման մեջ ստույգ սահմանված են ֆոնային աղտոտվածության հասկացությունը և ՄԹԱ նախագծերի կառուցվածքն ու բովանդակությունը: Որոշման հավելվածում տրված են ՄԹԱ նախագիծ կազմելու հրահանգները, որտեղ մասնավորապես ասվում է, որ <<ՄԹԱ նախագծին որպես առանձին հավելված>> տրվում է վնասակար նյութերի մթնոլորտում ցրման հաշվետվությունը, որն իրականացվելու է ՀՀ բնապահպանության նախարարության մասնագիտացված կառույցի կողմից:

Անշարժ աղբյուրներից՝ մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական կառավարման կարգը հիմնված է մթնոլորտային օդի պահպանության օրենքի հավելվածի վրա, որի հիմնական նպատակն է օդի որակի պահպանությունը՝ նորմավորման կամ անհրաժեշտ դեպքում, մթնոլորտ արտանետվող՝ մարդածին վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցով:

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների պետական կառավարման մեխանիզմը իրականացվում է պետական հաշվառման, կարգավորման և պետական վերահսկողության միջոցով:

Համաձայն գործող օրենքի՝ մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող կազմակերպությունները, որոնց ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ. մ³/տարի կամ 2 հազ. մ³/վրկ., պարտավոր են մշակել ՄԹԱ նախագծեր, որոնց հիման վրա հատուկ լիազորված մարմնի կողմից (ներկայումս այդ լիազորված մարմինը ՀՀ բնապահպանության նախարարությունն է) տրվում է արտանետման թույլտվություն:

Թույլտվությունը տրվում է համապատասխան փաստաթղթի՝ կազմակերպության կողմից կազմված սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվների նախագծի փորձաքննության հիման վրա: Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող կազմակերպությունների համար, որոնց ՕՊՕ-ն չի գերազանցում 2 մլրդ. մ³/տարի, արտանետումների սահմանաքանակներ են հանդիսանում իրենց իսկ փաստացի արտանետումները:

Ելնելով այդ պահանջից, սահմանափակվում է յուրաքանչյուր նյութի արտանետման աղբյուրի հզորությունը (ինտենսիվությունը) գ/վրկ, ինչպես նաև սահմանափակվում են ընդհանուր արտանետումները տ/ տարի: Մթնոլորտային օդի որակի չափանիշ է հանդիսանում տվյալ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան բնակավայրերի օդային ավազանում:

Վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները հաստատված են 02.02.2006թ. ՀՀ կառավարության N160 որոշմամբ: Որոշմամբ և իր հետևյալ լրացումներով հաստատվել են սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ և միջին օրեկան

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

խտությունների (կոնցենտրացիաներ-ՍԹԿ) մոտ 400 նյութի համար: Հիմնականում օգտագործվել են Խորհրդային Միության ժամանակ ընդունված ՍԹԿ-ները:

Նորմավորման տվյալների և արտանետումների հաշվառման հիման վրա ձեռնարկվում են միջոցառումներ և մեխանիզմներ՝ մթնոլորտային աղտոտման կառավարման համար, որն էլ հենց հանդիսանում է մթնոլորտային օդի պահպանության պետական կառավարման ոլորտ:

2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Եվրոպական հաճնաժողովը և Եվրախորհրդարանը ընդունել են մի շարք կարևոր նորմատիվային ակտեր, որոնք կանոնակարգում են մթնոլորտի պահպանության հարցերը, այդ թվում՝ շրջանակային ջրային Դիեկտիվը 2000/60/EC, թափոնների շրջանակային Դիեկտիվը 75/442/EEC, արդյունաբերական արտանետումների 2010/75/EU Դիեկտիվը և այլն: Արդյունաբերական արտանետումների աղբյուրների կառավարման համար, ԵՄ-ի գլխավոր օրենսդրական ակտն է՝ **Եվրոպական Պառլամենտի և ԵՄ-ի Խորհրդի՝ արդյունաբերական արտանետումների մասին (արտանետումների համալիր կանխարգելման և կառավարման մասին) N 2010/75/ EC Դիեկտիվը:**

Այդ Դիեկտիվի նպատակն է՝ որոշակի արդյունաբերական ոլորտների արտանետումների կառավարումը և համալիր կանխարգելումը, ներառյալ թափոնների վերաբերյալ միջոցառումները:

Այդ համալիր համակարգի նպատակն է՝ կանխարգելել կամ նվազեցնել մթնոլորտային, ջրային, հողային արտանետումները և ընդհանուր առմամբ հասնել շրջակա միջավայրի պահպանության բարձր մակարդակի: Իրականում Դիեկտիվի նպատակն է նվազեցնել ԵՄ-ի տարբեր արդյունաբերական աղբյուրների աղտոտումը:

Դիեկտիվը ԵՄ-ից պահանջում է տալ համալիր թույլտվություններ և սահմանափակել ԱՆ-ի արտանետումները՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների միջոցով: Այդ Դիեկտիվը վերաբերվում է այնպիսի աշխատանքային ոլորտների՝ ինչպիսիք են էներգետիկայի ոլորտը, մետաղի, հանքանյութերի, քիմիկատների մշակման և արտադրման ոլորտը, թափոնների դեկավարման ոլորտը, տեքստիլի, կաշվե գործարանների, թղթի և սննդային վերամշակման ոլորտները:

Արդյունաբերական սարքավորումներն օգտագործողները՝ ընկնելով Դիեկտիվի ազդեցության տակ, պետք է ստանան հեղինակային իրավունք (էկոլոգիական թույլտվություն) ԵՄ երկրների համապատասխան մարմիններից: Մոտ 50.000 կայանքներ/ սարքավորումներ ենթակա են Եվրոպական միության ԱՀԿԳ Դիեկտիվին: Թեև, ինքը՝ Դիեկտիվը, չի սահմանում արտանետումների նորմատիվների ընդհանուր չափանիշներ՝ ԵՄ երկրների համար, բայց այն սահմանում է դրանց որոշման կարգը: ԱԱԴ-ն իրավասու մարմիններին տրամադրում է բավարար ազատություն՝ այնպիսի թույլատրելի սահմանային քանակություններ սահմանելու համար, որոնք ապահովում են, որ շահագործման նորմալ պայմաններում արտանետումները չեն գերազանցում այն մակարդակները, որոնք հատուկ են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին: Այս նպատակով իրավասու մարմինը կարող է սահմանել արտանետումների այնպիսի սահմանային թույլատրելի քանակություններ, որոնք տարբերվում

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակներից՝ կապված կիրառվող արժեքների, ժամկետների եւ ելակետային պայմանների հետ, եթե արտանետումների դիտանցման արդյունքների միջոցով կհաստատվի, որ արտանետումները չեն գերազանցել լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակները: Թույլտվություններով սահմանված սահմանային քանակությունները հանդիսանում են վերին շեմ, իսկ փաստացի արտանետումները՝ որպես կանոն, լինում են ավելի քիչ (ԱԱԴ,15):

2.1. ԱՀԿԿ-ի ընդհանուր դրույթները

ԵՄ անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ նախատեսելու համար, որ կառուցվածքները շահագործվում են՝ հետևյալ սկզբունքների համաձայն՝

ա) աղտոտման դեմ ձեռնարկվում են բոլոր համապատասխան կանխարգելիչ միջոցները, կիրառելով լավագույն հասանելի տեխնոլոգիաները.

գ) շրջակա միջավայրն էականորեն չի աղտոտվում.

դ) թափոնների գոյացումը կանխարգելվում է՝ (նվազեցնելով թափոնների քանակը՝ եթե հնարավոր է, դրանց երկրորդական օգտագործման միջոցով),

ե) էներգիան արդյունավետորեն է օգտագործվում.

զ) ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ վթարներից խուսափելու եւ դրանց հետեւանքները նվազեցնելու համար

ը) գործունեության վերջնական դադարեցումից հետո ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աղտոտման վտանգներն ամբողջությամբ բացառելու եւ շահագործման վայրի՝ 22-րդ հոդվածով սահմանված բավարար վիճակը վերադարձնելու համար:

Հիմնական ջանքերը պետք է ուղղված լինեն Շրջակա միջավայրի (ՇՄ) վրա ազդեցության նվազեցմանը, առաջին հերթին կենտրոնանալով աղտոտման աղբյուրի վրա, այնուհետև հնարավորինս՝ օգտագործվող ռեսուրսների վերամշակման, և վերջում արդեն ՇՄ-ի վրա ազդեցության նվազեցման վրա: Երբ հաշվի են առնվում թույլտվության պայմանները, համալիր մոտեցումը օգտագործվում է <<ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի համար լավագույն >> որոշումների կիրառման միջոցով:

Մինչույն ժամանակ, Դիրեկտիվը չի սահմանում պահանջներ և չի կանոնակարգվում նեղ սահմաններում՝ տալով իրավունք ընդհանուր դրույթների հիման վրա լուծել շատ հարցեր ազգային մակարդակով:

2.2. Սահմանումներ

Պահանջների ներկայացման և Դիրեկտիվի կարգավորման համար կարևոր դեր են խաղում սահմանումները: Աղյուսակ 1-ում տրված են հիմնական դրույթների սահմանումները, N 2010/75/EC Դիրեկտիվի համաձայն երևույթների և նորմատիվների բնութագրերը՝ համեմատելով դրանք հայկական օրենսդրության կամ ընթացիկ պրակտիկայի հետ: Աղյուսակ 1-ում տրված են հիմնական դրույթների սահմանումները, երևույթների և նորմատիվների բնութագրերը՝ ըստ N 2010/75/EC Դիրեկտիվի համեմատելով դրանք հայկական օրենսդրության կամ ընթացիկ պրակտիկայի հետ:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(1)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
1	<p>նյութ` յուրաքանչյուր քիմիական կամ կենսաբանական նյութ կամ այդպիսի նյութերի խառնուրդ, բացառությամբ`</p> <p>ա) ռադիոակտիվ նյութերի` համաձայն Եվրոպական Խորհրդի 1996թվականի մայիսի 13-ի Դիրեկտիվ 96/29-ի հոդված 1-ի</p> <p>բ) ռադիոակտիվ նյութերի` համաձայն Եվրոպական Խորհրդի 13.05.96 , Դիրեկտիվ 96/29-ի հոդված 1-ի,</p> <p>գ) գենետիկորեն փոփոխված օրգանիզմների` համաձայն Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի ԵԽ 2001 թվականի մարտի 12-ի 2001/18/ ԵԽ Դիրեկտիվի հոդված 2 կետ 2-ի</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է համաձայն իր գիտական իմաստի</p>
2	<p>աղտոտում` նշանակում է մարդու գործունեության հետեւանքով նյութերի, տատանումների, տաք օգտագործված գազերի կամ աղմուկի ուղղակի կամ անուղղակի ներմուծում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ, որը կարող է վնասակար լինել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի որակի համար, վնաս հասցնել նյութական գույքին կամ որոշակի ազդեցություն ունենալ գեղագիտական արժեքների եւ շրջակա միջավայրի այլ օրինական կիրառությունների վրա.</p>	<p>Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքով սահմանված է հետևյալը` <<աղտոտող նյութը` քիմիական կամ կենսաբանական նյութ կամ այդպիսի նյութերի խառնուրդն է, որն առկա է մթնոլորտային օդում, և որը որոշակի կոնցենտրացիաների դեպքում վնասակար ազդեցություն է ունենում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:</p>
3	<p>կայանք/սարքավորում` տեխնիկական ստացիոնար սարքավորումներ, որոնց միջոցով իրականացվում են մեկ կամ մի քանի տիպի գործունեություններ, որոնք նշված են սույն Դիրեկտիվի Հավելված I-ում կամ Հավելված IV-ի Մաս 1-ում, ինչպես նաև այլ գործունեություններ, որոնք անմիջապես կապված են այդ Հավելվածներում նշված գործունեության տեսակների հետ և ազդում են արտանետումների և աղտոտումների վրա. ԱԱդ-ն ներառում է միայն առավել զգալի աղտոտվածության կայանքներ/սարքավորումները:</p>	<p>Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի համաձայն սահմանվել է հետևյալ հասկացությունը` ”արտանետման աղբյուրը դա` տեխնոլոգիական սարքավորում կամ օբյեկտ է, որից վնասակար (աղտոտող) նյութն անջատվում և արտանետվում (թափանցում) է մթնոլորտային օդ”։ Հայկական օրենսդրության մեջ առաջարկվում է “պետական հաշվառման ենթակա սուբյեկտ” հասկացությունը։ Որպես հաշվառման չափանիշ ընդունված է օդի պահանջվող օգտագործման արժեքը, որը հավասար է 200մլն. մ³:</p>

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(2)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
4	արտանետումներ ՝ նշանակում է կայանքների/սարքավորումների կետային կամ ցրված աղբյուրներից նյութերի, տատանումների, տաք օգտագործված գազերի կամ ադմուկի ուղղակի կամ անուղղակի արտանետում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ	Մահմանված չեն օրենսդրությամբ, բայց գործածվում են (տես վերևում)
5	արտանետումների սահմանային արժեքներ ՝ նշանակում է որոշակի հարաչափերով արտահայտված զանգված, արտանետումների կոնցենտրացիա եւ (կամ) մակարդակ, որոնք չի թույլատրվում գերազանցել մեկ կամ մի քանի որոշակի ժամանակահատվածների ընթացքում. “սահմանային թույլատրելի արժեք” սահմանվում է յուրաքանչյուր կայանքի/սարքավորման համար՝ Հռված 14-ում նշված թույլտվության պայմանները, ներառյալ սահմանային թույլատրելի արժեքը, պետք է սահմանվեն համաձայն ԼՀՏ-ի և ԼՀՏ-ի հետ կապված արտանետումների մակարդակի	Կիրառվում է հետևյալ հասկացությունը՝ «սահմանային թույլատրելի արտանետում», որը սահմանվում է առանձին կազմակերպությունների համար և կապ չունի ընդհանուր ոլորտի կամ երկրի արտանետումների սահմանային արժեքների հետ
6	շրջակա միջավայրի որակի չափանիշները ՝ նշանակում են այնպիսի պահանջներ, որոնց պետք է որոշակի ժամանակահատվածում համապատասխանի տվյալ շրջակա միջավայրը կամ դրա մի մասը՝ Միության օրենսդրության համաձայն.	Չափանիշները սահմանված են, ոչ ԵՄ –ի օրենսդրության համաձայն: ՄԹԿ-ն հանդիսանում է մթնոլորտային օդի որակի չափանիշ
7	թույլտվություն ՝ նշանակում է կառուցվածքը կամ այրման կայանը, աղբի այրման գործարանը կամ աղբը որպես հումք օգտագործող կայանն ամբողջությամբ կամ մասամբ շահագործելու գրավոր թույլտվություն	Օրենքով սահմանված չեն, բայց կիրառվում են
8	ընդհանուր պարտադիր կանոններ ՝ նշանակում է արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններ կամ այլ պայմաններ, նվազագույնը՝ ոլորտի մակարդակով, որոնք ընդունվում են՝ ուղղակիորեն թույլտվության պայմանները սահմանելու համար օգտագործման նպատակով.	Չկա

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(3)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
9	<p>Էական փոփոխություն՝ նշանակում է կառուցվածքի կամ այրման կայանի, աղբի այրման գործարանի կամ աղբը որպես հումք օգտագործող գործարանի բնույթի կամ շահագործման փոփոխություն կամ ընդարձակում, որը կարող է զգալի բացասական ազդեցություններ ունենալ մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա.</p>	<p>“Էական փոփոխություն” հասկացությունը, օրենքով սահմանված չէ, ՀՀ կառավարության 27.12.2012թ. N 1673-N որոշման մեջ սահմանված է, որ ՄԹԱ-ի նորմատիվները՝ ուժի մեջ են, “քանի դեռ աղտոտող աղբյուրների և աղտոտող նյութերի հետ ոչ մի որակական և քանակական փոփոխություններ տեղի չեն ունենցել”</p>
10	<p>լավագույն հասանելի տեխնոլոգիաներ՝ գործունեության տեսակների և դրանց մեթոդների շահագործման առավել արդյունավետ և առաջադեմ զարգացման փուլ, որը վկայում է որոշակի տեխնոլոգիաների գործնական պիտանիության մասին, որոնք նախատեսված են պահպանելու արտանետումների սահմանային արժեքները և թույլտվության այլ պայմանները , որոնք նախատեսված են կանխելու կամ, եթե դա իրագործելի չէ, նվազեցնելու արտանետումները և ազդեցությունը շրջակա միջավայրի վրա</p>	<p>Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի համաձայն՝ ԼՀՏ - գիտատեխնիկական ժամանակակից նվաճումների վրա հիմնված արտադրական տեխնոլոգիական լուծումներ, գործընթացներ և ռեժիմներ են, որոնք հաստատել են իրենց գործնական կիրառելիությունը, և որոնց կիրառումը նպաստում է բնական ռեսուրսների ինայողաբար օգտագործմանը և շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ, ջրային օբյեկտներ, հողային ծածկույթ, կենսոլորտ) վնասակար ներգործության նվազեցմանը</p>
11	<p>ԼՀՏ ելակետային փաստաթուղթ՝ նշանակում է 13-րդ հոդվածի համաձայն կազմակերպված՝ տեղեկությունների փոխանակումից բխող փաստաթուղթ, որը կազմվում է որոշակի գործունեության համար եւ, մասնավորապես, նկարագրում է կիրառվող տեխնոլոգիաները, արտանետումների եւ սպառման ներկա մակարդակները, այն մեթոդները, որոնք օգտագործվում են՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաները սահմանելու համար, ինչպես նաեւ ԼՀՏ եզրակացություններն ու ցանկացած նոր տեխնոլոգիա մասնավորապես հաշվի առնելով 3-րդ հավելվածում նշված չափորոշիչները.</p>	<p>Չկա</p>

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(4)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
12	<p>ԼՀՏ եզրակացություններ՝ նշանակում է այնպիսի փաստաթուղթ, որը պարունակում է ԼՀՏ ելակետային փաստաթղթի այն մասերը, որոնցում սահմանվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաների մասին եզրակացությունները, դրանց նկարագրությունը, դրանց կիրառումը գնահատելու համար տեղեկությունները, լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ կատարվող արտանետումների մակարդակները, դրանց դիտանցումը, սպառման մակարդակները եւ, անհրաժեշտության դեպքում, տեղանքի վերականգնման համապատասխան միջոցները</p>	Չկա
13	<p>լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետման մակարդակներ՝ նշանակում է արտանետումների այն մակարդակներ, որոնք ԼՀՏ եզրակացությունների նկարագրության համաձայն օգտագործման դեպքում ապահովվում են շահագործման բնականոն պայմաններում լավագույն հասանելի որեւէ տեխնոլոգիա կամ լավագույն հասանելի մի քանի տեխնոլոգիաներ, որոնք արտահայտում են տվյալ ժամանակահատվածի միջին արտանետումները՝ սահմանված ելակետային պայմանների համաձայն</p>	Չկա
14	<p><< նոր տեխնոլոգիա >> նշանակում է արդյունաբերական գործունեության համար նախատեսված որեւէ նոր տեխնոլոգիա, որը կոմերցիոն զարգացման դեպքում կարող է ապահովել կա՛մ շրջակա միջավայրի պահպանման ավելի բարձր մակարդակ, կա՛մ առնվազն շրջակա միջավայրի պահպանման նույն մակարդակը, բայց ծախսերի ավելի մեծ խնայողությամբ, քան օգտագործվող լավագույն հասանելի տեխնոլոգիաները</p>	Չկա

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(5)

N	Սահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
15	<p>Օպերատոր` նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով ամբողջությամբ կամ մասամբ շահագործում, կամ վերահսկում է որեւէ կառուցվածք կամ այրման կայան, աղբի այրման գործարան, կամ աղբը որպես վառելիք, կամ հումք օգտագործող այրման կայանք, կամ ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում` ում տրվել է տեխնիկական շահագործման բացառիկ տնտեսական լիազորություն.</p>	<p>Ընդունված է << տնտեսավարող սուբյեկտ>> արտահայտությունը</p>
16	<p>Հասարակություն` նշանակում է մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք եւ, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց խմբավորումները, ՀԿ-ները կամ խմբերը</p>	<p>ՀՀ օրենսդրության մեջ “հասարակություն” հասկացությունը սահմանված չէ, սակայն Հայաստանը Օրհուսի կոնվենցիայի և բոլոր դրույթների կողմ է հանդիսանում</p>
17	<p>Շահագրգիռ հասարակություն` նշանակում է այն հասարակությունը, որի վրա ազդել է կամ կարող է ազդել թույլտվություն տրամադրելու կամ այն թարմացնելու կամ թույլտվության պայմանները սահմանելու կամ թարմացնելու մասին որոշումների ընդունումը, կամ որը հետաքրքրված է դրանով. սույն սահմանման նպատակներով` շրջակա միջավայրի պահպանությունը խթանող եւ ազգային օրենսդրության պահանջները բավարարող կազմակերպությունները համարվում են շահագրգիռ.</p>	<p>Բնապահպանական փորձաքննության մասին օրենքում ընդունված է` <<համայնք, որը կարող է ենթարկվել վնասակար ազդեցության, շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հետևանքով>></p>
18	<p>Վտանգավոր նյութեր` նշակում է նյութեր կամ խառնուրդներ` Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման ու փաթեթավորման մասին» թիվ 1272/2008 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածի համաձայն (18).</p>	<p>Թափոնների մասին օրենքում սահմանում է` “վտանգավոր թափոնները այն թափոններն են , որոնք իրենց ֆիզիկական, քիմական կամ կենսաբանական հատկություններով ներկայացնում են կամ կարող են ներկայացնել վտանգ մարդու առողջության և ՇՄ համար և պահանջվում են հատուկ պայմաններ, մեթոդներ և միջոցներ դրանց հետ գործ ունենալու համար”: ՀՀկառավարության 02.02.2006թ. N 160 որոշման համաձայն` նյութերը դասակարգվում են ըստ վտանգավորության դասի (դասեր I – IV):</p>

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(6)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
19	<p>նախնական զեկույց՝ նշանակում է համապատասխան վտանգավոր նյութերով հողի եւ ստորերկրյա ջրերի աղտոտման վիճակի մասին տեղեկություններ.</p>	<p>Օրենքով այս հասկացությունը սահմանված չէ: Չկան պահանջներ, համաձայն որոնց կայանքի տեղամասում հողի եւ ստորերկրյա ջրերի աղտոտումը վաղ փուլում հայտնաբերվեն եւ, անհրաժեշտության դեպքում, աղտոտման տարածումից առաջ համապատասխան վերականգնողական միջոցներ ձեռնարկվեն, ինչպես նաև վտանգավոր նյութերի հայտնաբերման նպատակով հողի եւ ստորերկրյա ջրերի դիտանցում իրականացվի: ՇՄ-ի վրա ազդեցության գնահատման մասին օրենքի համաձայն ՇՄԱԳ-ի նախնական զեկույցը պետք է, հետևաբար, տեղեկություններ պարունակի հողի եւ ստորերկրյա ջրերի չափումների վերաբերյալ առկա տվյալների մասին:</p>
20	<p>ստորերկրյա ջրեր՝ նշանակում է Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակ սահմանող Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ստորերկրյա ջրեր</p>	<p>Ըստ ՀՀ Ջրային օրենսգրքի՝ ստորերկրյա ջրերը սահմանված են ընդհանուր ջրային ռեսուրսների կազմում՝ “բոլոր մակերեսային և ստորերկրյա ջրերը, այդ թվում նաև գետերը, լճերը, աղբյուրները, ճահճային և ջրային ծածկույթները, ձյան ծածկույթը և այլ ջրային ռեսուրսները”</p>
21	<p>Հող՝ նշանակում է երկրակեղևի վերին շերտ, որը գտնվում է հիմնածայրի եւ մակերևույթի միջև: Հողը կազմված է հանքանյութերից, օրգանական նյութից, ջրից, օդից եւ կենդանի օրգանիզմներից</p>	<p>համապատասխանում է</p>
22	<p>շրջակա միջավայրի տեսչական ստուգում՝ նշանակում է բոլոր այն գործողությունները՝ ներառյալ կառուցվածքի գտնվելու վայր այցելությունները, արտանետումները և լրացուցիչ փաստաթղթերի դիտանցումը, օգտագործվող տեխնոլոգիաների, ինչպես նաև ՇՄ համար բարենպաստ լինելու համարժեքության ստուգումը, որն իրականացվում է իրավասու մարմնի կողմից կամ նրա անունից՝ ստուգելու նպատակով ՇՄ վրա ազդեցությունը</p>	<p>համապատասխանում է</p>

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(7)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
23	վառելիք ՝ նշանակում է պինդ, հեղուկ կամ գազային դյուրավառ նյութ	Օրենքով սահմանված չէ, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում է
24	այրման կայանք ՝ նշանակում է ցանկացած տեխնիկական սարքավորում, որի մեջ վառելիքն օքսիդացվում է՝ ստացված ջերմությունն օգտագործելու նպատակով:	Օրենքով սահմանված չէ, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում է
25	ծխատար ՝ նշանակում է կառույց, որն ունի մեկ կամ ավելի խողովակ, որոնք ապահովում են արտանետվող գազերի արտահոսքը	Օրենքով սահմանված չէ, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում է
26	շահագործման ժամեր ՝ նշանակում է այն ժամանակահատվածը՝ արտահայտված ժամերով, որոնց ընթացքում այրման կայանն ամբողջությամբ կամ մասամբ շահագործվում է, և մթնոլորտ արտանետումներ են կատարվում՝ բացառությամբ գործարկման եւ պարապուրդի ժամանակահատվածների.	Օրենքով սահմանված չէ, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում է
27	ծծմբագործման գործակից ՝ նշանակում է տվյալ ժամանակահատվածում այրման կայանից մթնոլորտային օդ չարտանետվող ծծմբի քանակության հարաբերակցությունը այրման կայանի սարքավորանքներում լցվող եւ միննույն ժամանակահատվածի ընթացքում օգտագործվող վառելիքում պարունակվող ծծմբի քանակության նկատմամբ	Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է արտանետումների հաշվարկման ժամանակ
28	տեղական ծագման պինդ վառելիք ՝ պինդ վառելիք, որը բնական ճանապարհով կարելի է ստանալ այդ վառելիքի համար նախատեսված այրման կայանում, եւ որը կարելի է ստանալ այդ տարածքում	Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է
29	բազմավառելիքային այրման կայան ՝ նշանակում է ցանկացած այրման կայան, որը կարող է համաժամանակյա կամ այլընտրանքային կարգով շահագործվել երկու կամ ավելի տեսակի վառելիքով.	Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է
30	գազատուրբին ՝ ջերմային էներգիան մեխանիկական աշխատանքի վերածող ցանկացած պտտվող մեքենա, որը բաղկացած է գլխավորապես կոմպրեսորից, այրման ագրեգատից, որում վառելիքն օքսիդացվում է՝ բանվորական հեղուկը տաքացնելու նպատակով, եւ տուրբինից.	Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(8)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
31	<p>կենսազանգված՝ նշանակում է ստորեւ նշվածից որեւէ մեկը՝</p> <p>ա) գյուղատնտեսությունից կամ անտառտնտեսությունից գոյացած բուսանյութից բաղկացած արտադրանք, որը կարող է օգտագործվել որպես վառելիք դրանց էներգատարության վերականգնման նպատակով.</p> <p>բ) հետեւյալ թափոնները՝</p> <p>i) գյուղատնտեսությունից եւ անտառտնտեսությունից գոյացող բուսական թափոններ,</p> <p>ii) սննդի մշակման արդյունաբերությունից գոյացող բուսական թափոններ, եթե արտադրվող ջերմությունը վերաօգտագործվում է,</p> <p>iii) սկզբնային հումքից ստացվող ցելյուլոզայի եւ ցելյուլոզայից ստացվող թղթի արտադրությունից գոյացող թելքային բուսանյութի թափոններ, եթե դրանք այրվում են արտադրության վայրում, իսկ ստացվող ջերմությունը վերաօգտագործվում է,</p> <p>iv) խցանի թափոններ,</p> <p>v) փայտի թափոններ՝ բացառությամբ այն փայտի թափոնների, որոնք փայտի համար նախատեսված կոնսերվանտներով կամ պատվածքով մշակելու արդյունքում կարող են պարունակել հալոգենացված օրգանական միացություններ կամ ծանր մետաղներ, եւ որոնք մասնավորապես պարունակում են շինարարությունից եւ քանդումից գոյացած թափոններից առաջացած փայտի թափոններ.</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է</p>
32	<p>գազային շարժիչ՝ նշանակում է ներքին այրման շարժիչ, որը գործում է Օտտո ցիկլի համաձայն և կայծ է օգտագործում, իսկ երկու տեսակի վառելիքով աշխատող շարժիչների դեպքում՝ սեղմում՝ վառելիքն այրելու համար</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է</p>
33	<p>դիզելային շարժիչ՝ նշանակում է ներքին այրման շարժիչ, որը գործում է դիզելային ցիկլի համաձայն եւ օգտագործում սեղմում՝ վառելիքն այրելու համար</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է</p>

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(9)

N	Սահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
34	<p>Ֆոքր մեկուսացված համակարգ՝ մեկուսացված համակարգ՝ ըստ Եվրոպական Պատվամենտի եւ Խորհրդի 26/06/2003 «Էլէկտրոգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների վերաբերյալ» 2003/54/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 26-րդ կետի</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է ամենալայն իմաստով</p>
35	<p>Թափոն՝ նշանակում է Եվրոպական պատվամենտի եւ Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի «Թափոնների մասին» 2008/98/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն սահմանված թափոններ</p>	<p>Համաձայն թափոնների մասին օրենքի՝ “հումքի, նյութերի, այլ արտադրանքի թափոնները, որոնք առաջացել են արտադրության կամ օգտագործման գործընթացներում, ինչպես նաև արտադրանքները, որոնք կորցրել են իրենց ինքնատիպ հատկությունները”</p>
36	<p>Վտանգավոր թափոններ՝ նշանակում է 2008/98/ԵՀ հրահանգի 2(3)(ա) հոդվածով սահմանված թափոններ.</p>	<p>Համաձայն թափոնների մասին օրենքի՝ ”վտանգավոր թափոնները նրանք են ,որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու առողջության և ՇՄ վրա , և որոնց հետ գործ ունենալու համար անհրաժեշտ են հատուկ միջոցներ”</p>
37	<p>խառը քաղաքային թափոններ՝ նշանակում է կենցաղային, ինչպես նաև առևտրային, արդյունաբերական եւ հասարակական կառույցներից արտանետվող թափոններ, որոնք բնութագրվում են կազմով նման են կենցաղային թափոններին՝ բացառությամբ այն մասնիկների, որոնք նշված են 2000/532/ԵՀ որոշման 20 01 գլխում, եւ որոնք առանձին են կուտակվում աղտոտման աղբյուրում, ինչպես նաև բացառությամբ այդ հավելվածի 20 02 գլխում նշված այլ թափոնների</p>	<p>Կենցաղային թափոնների համար առանձին սահմանում չկա, դրանք ներառված են <<թափոններ>> ընդհանուր հասկացության մեջ (տես. կ.37)</p>
38	<p>աղբի այրման գործարան՝ նշանակում է ցանկացած անշարժ կամ շարժական տեխնիկական կառույց, որը նախատեսված է այրման միջոցով գոյացող ջերմության վերականգնմամբ կամ առանց դրա թափոնների ջերմային մշակման համար՝ թափոնների օքսիդացմամբ, ինչպես նաև այլ ջերմային մշակման գործընթացներով, եթե մշակումից գոյացող նյութերը այրվում են</p>	<p>Գործնականում կիրառվում է, բայց ոչ ըստ ԵՄ Դիրեկտիվի սահմանումների</p>

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(10)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
39	<p>աղբը որպես հումք օգտագործող գործարան՝ ցանկացած անշարժ կամ շարժական տեխնիկական կառույց, որի հիմնական նպատակը էներգիա ստանալը կամ նյութական ապրանքներ արտադրելն է, և որն օգտագործում է աղբը որպես հիմնական կամ լրացուցիչ վառելիք, կամ որի մեջ թափոնները ենթարկվում են ջերմային մշակման՝ թափոնների օքսիդացմամբ, ինչպես նաև ջերմային մշակման այլ գործընթացներով, ինչպիսիք հրաքայքայումը, գազացումը կամ պլազմային մշակումն են, եթե գոյացող թափոնները նույնպես այրվում են՝ այրման միջոցով թափոնները հեռացնելու նպատակով</p>	<p>Գործնականում կիրառվում է, բայց ոչ ըստ ԵՄ Դիրեկտիվի սահմանումների</p>
40	<p>նումինալ հզորություն՝ նշանակում է այն վառարանների այրման հզորության գումարը, որոնցից կազմված է աղբի այրման գործարանը կամ աղբը որպես հումք օգտագործող գործարանը, ինչպես հաստատված օպերատորի կողմից՝ համապատասխան կերպով հաշվի առնելով թափոնների ջերմատվությունը, որն արտահայտվում է ժամում թափոնների այրման քանակությամբ</p>	<p>Գործնականում կիրառվում է, բայց ոչ ըստ ԵՄ Դիրեկտիվի սահմանումների</p>
41	<p>դիօքսին և ֆուրան՝ նշանակում են պոլիքլորինացված դիբենզոդիօքսին եւ դիբենզոֆուրան, որոնք նշված են 6-րդ հավելվածի 2-րդ մասում.</p>	<p>Գործնականում կիրառվում է</p>
42	<p>օրգանական միացություն՝ նշանակում է ցանկացած միացություն, որը պարունակում է ածխածնի առնվազն մեկ տարր կամ ջրածնի, հալոգենի, թթվածնի, ծծմբի, ֆոսֆորի կամ ազոտի մեկ կամ մի քանի տարրեր՝ բացառությամբ ածխածնի օքսիդների, անօրգանական կարբոնատների</p>	<p>Գործնականում կիրառվում է</p>
43	<p>ցնդող օրգանական միացություն (ՑՕՄ)՝ նշանակում է ցանկացած օրգանական միացություն, ինչպես նաև կրեոզոտի մասնիկ, որն ունի 0,01 կՊ հավասար գոլորշու ճնշում կամ ավելին, կամ ունի նման անկայունություն ունի.</p>	<p>Գործնականում կիրառվում է</p>

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 2(11)

N	Մահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
44	<p>օրգանական լուծիչ` նշանակում է ցանկացած ցնդող օրգանական միացություն, որն օգտագործվում է հետեւյալ նպատակներից յուրաքանչյուրի համար</p> <p>ա) առանձին կամ այլ նյութերի հետ համադրությամբ եւ առանց քիմիական փոփոխության ենթարկվելու՝ հումքը, արտադրանքը կամ թափոնները լուծելու համար.</p> <p>բ) որպես մաքրող նյութ՝ աղտոտիչներ լուծելու համար.</p> <p>գ) որպես լուծող նյութ.</p> <p>դ) որպես մաքրող նյութ.</p> <p>ե) որպես մածուցիկության կարգավորիչ.</p> <p>զ) որպես մակերեւութային լարվածության կարգավորիչ.</p> <p>է) որպես պլաստիկարար.</p> <p>ը) որպես պահպանիչ պատվածք</p>	<p>Գործնականում կիրառվում է</p>
45	<p>երեսապատում` նշանակում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի «Որոշ ներկերում, լաքերում եւ փոխադրամիջոցների երեսամշակման արտադրանքում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումները սահմանափակելու մասին» 2004/42/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված երեսապատում:</p>	<p>Օրենքով սահմանված չէ, բայց կիրառվում է ամենալայն իմաստով</p>

2.3 Համալիր թույլտվություն

Համաձայն Դիրեկտիվի` նոր սարքավորման/կայանքի համալիր թույլտվությունը պետք է տրվի, նախքան դրանց օգտագործումը: Թույլտվության դիմումները պետք է պարունակեն ճշգրիտ տեղեկատվություն: Թույլտվության տրամադրման գործընթացի ժամանակ, ԵՄ երկրների համապատասխան մարմինները ուղղորդվում են շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացքում ստացված յուրաքանչյուր լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվությամբ: Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թույլտվության տրամադրման պայմանները եւ ընթացակարգերը ամբողջովին համաձայնեցվեն, եթե տվյալ ընթացակարգում ընդգրկված է մեկից ավելի իրավասու մարմին կամ մեկից ավելի օպերատոր, կամ եթե տրամադրվում է մեկից ավելի

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Թույլտվություն՝ այս ընթացակարգի նկատմամբ բոլոր իրավասու մարմինների կողմից արդյունավետ միասնական մոտեցում ապահովելու նպատակով:

Թույլտվության տրամադրումը և կարգավորումը, իրավասու մարմնից պահանջում է լավ պատկերացում ունենալ կիրառվող տեխնիկական գործընթացի, ՇՄ-ի վրա պոտենցիալ ազդեցության, աշխատակազմի առողջության, ինչպես նաև հնարավորություն ստեղծել և կառավարել ԱՀԿՎ ռեժիմ: Մթնոլորտային օդի գնահատման համար, իրավասու մարմինները կդիմեն օպերատորին, որպեսզի նա հաշվի մթնոլորտային օդում ԱՆ նյութերի ցրման աստիճանը և համեմատի դրանք սահմանված ստանդարտների հետ:

Թույլտվության մեջ պետք է նշվեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ամբողջ շրջակա միջավայրի պահպանության բարձր մակարդակ հաստատելու եւ ապահովելու համար, որ կառուցվածքը շահագործվում է՝

- օպերատորի հիմնական պարտավորությունները կարգավորող ընդհանուր սկզբունքների համաձայն: Թույլտվության մեջ պետք է նաև նշվեն ադոտտող նյութերի սահմանային թույլատրելի նորմաները կամ համարժեք պարամետրերը,
- կամ տեխնիկական միջոցները, հողի ու ստորերկրյա ջրերի պահպանման համապատասխան պահանջները, ինչպես նաև դիտանցման պահանջները:

Թույլտվության պայմանները պետք է սահմանվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների հիման վրա:

Լավագույն հասանելի տեխնոլոգիաների կատարելագործումը կամ կառուցվածքի մյուս փոփոխությունները հաշվի առնելու համար՝ թույլտվության պայմանները պետք է կանոնավորապես վերանայվեն եւ, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն՝ մասնավորապես, եթե ընդունվում են նոր կամ թարմացված ԼՀՏ եզրակացություններ:

Մասնավոր դեպքերում, երբ թույլտվության վերանայման և թարմացման արդյունքում պարզվում է, որ կարող է անհրաժեշտ լինել ավելի քան չորս տարի՝ ԼՀՏ եզրակացությունների մասին որոշման հրապարակումից հետո լավագույն հասանելի տեխնոլոգիաները ներդնելու համար, իրավասու մարմինները կարող են թույլտվության պայմաններում սահմանել ավելի երկար ժամկետ, եթե դա արդարացված է՝ հիմնվելով սույն Հրահանգով սահմանված չափորոշիչների վրա:

Ինչպես նաև, սեփականատերը կարող է դիմել վերանայման խնդրանքով, եթե զգալի փոփոխություններ են տեղի ունեցել արտադրական գործունեության ընթացքի հետ:

Սույն Հրահանգի արդյունավետ իրականացումն ու կիրարկումն ապահովելու համար օպերատորները թույլտվության պայմանները բավարարելու մասին պետք է կանոնավորապես զեկուցեն իրավասու մարմնին: Եթե կան էական փոփոխություններ գործունեության մեջ, ապա թույլտվության պայմանները վերանայվում և լրացվում են: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օպերատորը եւ իրավասու մարմինը ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ սույն Հրահանգի դրույթները չկատարելու դեպքում, ինչպես նաև նախատեսում են բնապահպանական տեսչական ստուգումների համակարգ: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կա բավարար թվով անձնակազմ, որն ունի այդ ստուգումներն արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակավորումները:

Թույլտվությունների տրամադրմանը սովորաբար հաջորդում է սարքավորումներից և կայանքներից ԱՆ արտանետումների մոնիթորինգային համակարգի (արտադրական

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

վերահսկման) ստեղծման պահանջը: Թույլտվության մեջ նախանշվում են մոնիթորինգի վերաբերյալ, չափագրումների պարբերականության և կիրառվող անալիտիկ սարքավորումների վերաբերյալ պահանջները: Պարբերաբար բնույթի ստուգումներն իրականացվելու են լիազոր մարմնի կողմից, և դրանք կլրացվեն արտակարգ իրավիճակների ժամանակ անսպասելի ստուգումներով:

Հայաստանի Հանրապետությունում՝

Թույլտվություններ

Կազմակերպությունները ստանում են առանձին թույլտվություններ ազդեցության յուրաքանչյուր տեսակի համար, այսինքն՝ ջրի օգտագործման և կեղտաջրերի արտանետման համար առանձին, մթնոլորտային արտանետումների համար առանձին, վտանգավոր նյութերի հետ աշխատելու համար առանձին, որոնք տրվում են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Թույլտվությունները տրվում են ջրի օգտագործման նորմատիվների նախագծերի, թույլատրելի սահմանային արտահոսքերի (ԹՄԱ), սահմանայի թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) և թափոնների ձևավորման հիման վրա:

Թույլտվության ձեռքբերման կարգը, կառուցվածքը և բովանդակությունը սահմանված են համապատասխան օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում (տես Գլուխ 1):

2011 թվականին փոփոխություններ իրականացվեցին «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում: Մյուս փոփոխությունների հետ, սահմանվեց նաև ընկերությունների մթնոլորտային աղտոտման նվազագույն սահմանային պոտենցիալը, ըստ որի որոշվում են մթնոլորտ ԱՆ արտանետումների նորմերի սահմանման կամ տրման մեթոդները: Համաձայն այդ փոփոխության, ՄԹԱ նախագծի հիման վրա արտանետման թույլտվություն են ստանում միայն այն կազմակերպությունները, որոնց ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ. խոր.մ-ը: Այն կազմակերպությունների համար , որոնց ՕՊՕ-ն կազմում է 200մլն.-ից մինչև 2 մլրդ խոր.մ, արտանետումների սահմանային չափաքանակներ են հանդիսանում դրանց գործունեության արդյունքում առաջացած փաստացի արտանետումները: 200մլն. խոր.մ-ից ցածր ՕՊՕ ունեցող կազմակերպությունները պետական հաշվառման ենթակա չեն: Սահմանային թույլատրելի արտանետումների և արտահոսքի նորմատիվների նախագծերը՝ որոնք հաշվարկվում են հիմք ընդունելով սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) ստանդարտների պահանջները, մշակում են կազմակերպությունները: ՄԹԱ նորմատիվների նախագծերը , արտանետումների առանձին թույլտվության անբաժանելի մասն են կազմում: Այդ պահից սկսած, ՄԹԱ-ն (սահմանային թույլատրելի արտանետումներ) և ԹՄԱ-ն(թույլատրելի սահմանային արտահոսքեր) դառնում են նորմատիվներ՝ համապատասխան սարքավորումների/ կազմակերպությունների համար: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 13-ի համաձայն, թույլատրվում են միայն այն արտանետումները, որոնց համար մշակված են համապատասխան նորմատիվներ:

Նոր կառուցվող, ընդլայնվող և վերակառուցվող օբյեկտների համար թույլտվությունը տրվում է նախագծային հարցերով պետական բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության հիման վրա, որը ուժի մեջ է մտնում դրանց շահագործման հանձնելու օրվանից՝ մեկ տարի ժամկետով: Մեկ տարին անցնելուց հետո, նորմավորումը իրականացվում է համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի:

Մոնիթորինգ

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Հայաստանում ներկայումս, չկա որևէ օրենք, որը պահանջի կազմակերպություններից սահմանել մոնիթորինգի համակարգեր: Նման հարցեր ուսումնասիրող օրենսդրական նախագիծն ներկայացված է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը, բայց հայտնի չէ, երբ այն կընդունվի, ինչ փոփոխություններով և երբ ուժի մեջ կմտնի:

Օդային միջավայրի վիճակը գնահատելու համար ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ը իրականացնում է հանրապետության մի շարք քաղաքների օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգ:

Օդի աղտոտվածության մոնիթորինգը անց է կացվում 21 կայաններում, որոնցից 7-ը հազեցված են ավտոմատ սարքավորումներով: Բացի այդ հանրապետության 12 քաղաքներում տեղակայված են և գործում են մթնոլորտային օդի աղտոտման պասիվ մոնիթորինգի 214 կետեր:

Չնայած այն հանգամանքին, որ, համաձայն այդ մոնիթորինգի տվյալների, սահմանվում է ԱՆ մթնոլորտային օդի աղտոտման մակարդակը, հնարավոր չէ կապել այդ տվյալները առանձին կազմակերպությունների արտանետումների հետ, հատկապես նյութերի, որոնք արտանետում են մի քանի կազմակերպություններ և տրասպորտային միջոցներ:

Մթնոլորտային օդի որակի ստանդարտները

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ստանդարտ են հանդիսանում մթնոլորտային օդի վիճակի և դրանց սահմանային արժեքների գնահատման համար, համաձայն որի սահմանվում է յուրաքանչյուր աղբյուրի արտանետումները, ուսումնասիրվում է միայն արտանետման չափը՝ որպես այդպիսին, որը կապ չունի արտադրման տեխնոլոգիաների հետ: Կառավարության որոշմամբ և իր հետևյալ լրացումներով հաստատվել են մոտ 400 տեսակի բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտություններ (կոնցենտրացիաներ-ՄԹԿ) : Ցանկում ներկայացված են առավելագույն միանվագ (20 րոպե) և միջին օրեկան ՄԹԿ-ներ: Հիմնականում օգտագործվել են Խորհրդային Միության չափանիշները:

Վերահսկում

Նորմերին և բնապահպանական օրենսդրության պահանջներին համապատասխանելու վերահսկումը իրականացվում է << Բնապահպանական վերահսկման մասին>> օրենքի հիման վրա: Վերահսկումն իրականացվում է ԲՊՆ-ի պետական բնապահպանական տեսչության կողմից: Բնապահպանական օրենսդրության խախտման , ինչպես նաև ՄԹԱ(սահմանային թույլատրելի արտանետումներ) և ԹՄԱ (թույլատրելի սահմանային արտահոսքեր) սահմանված նորմատիվների խախտման, թափոնների ձևավորման և պահպանման դեպքերում, տեսուչները կարող են որոշում ընդունել սահմանափակել, կասեցնել կամ դադարեցնել կազմակերպության գործունեությունը:

2.4 Թույլատրելի արտանետումների նորմատիվները

Իրավասու մարմինը սահմանում է սահմանային թույլատրելի այնպիսի նորմաներ, որոնք ապահովում են, որ շահագործման բնականոն պայմաններում արտանետումները չզերազանցեն լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների այն մակարդակները, որոնք նշված են 13(5) հոդվածի ԼՀՏ եզրակացությունների մասին որոշումներում: Սահմանային

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

թույլատրելի քանակությունները սահմանվում են միեւնույն կամ ավելի կարճ ժամկետներով եւ միեւնույն ելակետային պայմաններով, որոնք սահմանված են լավագույն հասանելի տեխնոլոգիաներին հատուկ արտանետումների մակարդակների համար: Սահմանված չափանիշներին համապատասխան արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդի վրա գնահատելու և օդի որակի չափանիշների պահպանման համար, կիրառվում է մոդելավորման մեթոդը, որի ժամանակ հաշվման միջոցով որոշվում է ԱՆ-ի արտանետումների հետևանքները և ակնկալվող օդի որակը, որը համեմատվում է առկա չափանիշների հետ:

Իրավասու մարմինը կարող է որոշակի դեպքերում սահմանել արտանետումների ավելի ցածր սահմանային թույլատրելի քանակություններ: Նման շեղումը կարող է կիրառվել, եթե գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ լավագույն հասանելի տեխնոլոգիաների

հատուկ արտանետումների մակարդակները, որոնք նկարագրված են ԼՀՏ եզրակացություններում, կհանգեցնեն անհամաչափորեն

ավելի մեծ ծախսերի՝ համեմատած բնապահպանական օգուտների հետ՝ հետեւյալ պատճառներով՝

ա) տվյալ կառուցվածքի աշխարհագրական դիրքի կամ տեղի բնապահպանական պայմանների.

բ) տվյալ կառուցվածքի տեխնիկական առանձնահատկությունների:

Հայաստանի Հանրապետությունում

ՄԹԱ-ի հայկական նորմատիվներն սահմանվում են այնպես, որ ինչպես արտակարգ իրավիճակներում, այնպես էլ յուրաքանչյուր պայմաններում, չտոնահարվեն բնակեցված վայրերի մթնոլորտային օդի որակի սանիտարական նորմերը:

Հայաստանում գոյություն չունի այնպիսի օրենսդրություն, որը կսահմաներ նվազագույն թույլատրելի ազդեցության մակարդակ (ԹԱՄ):

Բացի այդ, չկան նորմատիվային փաստաթղթեր, որոնք սահմանում են արտանետումները կամ արդյունաբերական այլ ոլորտների չափանիշները :

2.5. Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ

Ինչպես արդեն նշվեց, Դիրեկտիվի նպատակն է՝ արտադրական գործունեության հետևանքով առաջացած աղտոտման համալիր վերահսկումը և կանխարգելումը՝ համաձայն Դիրեկտիվի Հավելված 1-ի, ինչը կհանգեցնի շրջակա միջավայրի պահպանության բարձր մակարդակի: Դրա իրականացումը կձառայի նաև այլ ընդհանուր նպատակների, ինչպիսիք են ԵՄ երկրների արդյունաբերական արտադրության մրցունակությունը, և դրանց ներդրումը կայուն զարգացման մեջ:

Արտադրական գործընթացների վերահսկողության և կառավարման բարելավման գլխավոր մոտեցումը դա ԼՀՏ-ի կիրառումն է:

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներ» նշանակում է որոշակի գործունեության եւ այդ գործունեության իրականացման մեթոդների զարգացման ամենաարդյունավետ եւ ամենակատարելագործված փուլը, որով նշվում է որեւէ տեխնոլոգիայի գործնական համապատասխանությունը արտանետումների սահմանային թույլատրելի քանակություններին

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Եւ թույլտվության մյուս այն պայմաններին հիմք ծառայելու համար, որոնք նախատեսված են կանխելու, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նվազեցնելու արտանետումներն ու

դրանց ազդեցությունն ամբողջ շրջակա միջավայրի վրա.

ա) «տեխնոլոգիաները» ներառում են եւ՝ օգտագործվող տեխնոլոգիան, եւ՝ ձեռնարկության նախագծման, պատրաստման, պահպանման, շահագործման ու շահագործման դադարեցման եղանակը.

բ) «հասանելի տեխնոլոգիաներ» նշանակում է այն տեխնոլոգիան, որն արտադրված է այնպիսի ծավալներով, որի դեպքում հնարավոր է դրա

շահագործումը համապատասխան արդյունաբերական սեկտորում տնտեսապես եւ տեխնիկապես իրագործելի պայմաններում՝ հաշվի առնելով ծախսերը եւ եկամուտները, եւ անկախ այն հանգամանքից՝ տեխնոլոգիան օգտագործվում է, թե արտադրվում տվյալ անդամ պետության տարածքում, քանի դեռ այն համապատասխան պայմաններով հասանելի է օպերատորին.

գ) «լավագույն» նշանակում է ամենաարդյունավետը՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար.

Լավագույն հասանելի տեխնոլոգիաները որոշելու եւ արդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող արտանետումների մակարդակի վերաբերյալ Միությունում անհամապատասխանությունները սահմանափակելու նպատակով՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների համար Ելակետային փաստաթղթերը (այսուհետ՝ ԼՀՏ Ելակետային փաստաթղթեր) պետք է կազմվեն, վերանայվեն եւ, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն շահագրգիռ կողմերի հետ տեղեկությունների փոխանակման եւ կոմիտեի ընթացակարգով ընդունված՝ ԼՀՏ Ելակետային փաստաթղթերի առանցքային տարրերի միջոցով (այսուհետ՝ ԼՀՏ Եզրակացություններ): Այս առումով Հանձնաժողովը պետք է կոմիտեի ընթացակարգով սահմանի տվյալների հավաքագրման, ԼՀՏ Ելակետային փաստաթղթերի մշակման եւ դրանց որակի ապահովման ուղեցույց: ԼՀՏ Եզրակացությունները պետք է օգտագործվեն որպես հղում՝ թույլտվության պայմանները սահմանելու համար: Դրանք կարող են հավելվել այլ աղբյուրներով: Հանձնաժողովը պետք է փորձի թարմացնել ԼՀՏ Ելակետային փաստաթղթերը ոչ ուշ, քան նախորդ տարբերակի հրապարակումից 8 տարի հետո:

Ելակետային փաստաթղթեր կազմվելու, վերանայելու եւ, անհրաժեշտության դեպքում, թարմացնելու համար Հանձնաժողովը կազմակերպում է տեղեկությունների փոխանակում անդամ պետությունների, համապատասխան արդյունաբերության ճյուղերի, շրջակա միջավայրի պահպանությունը խթանող հասարակական կազմակերպությունների եւ Հանձնաժողովի միջեւ:

Տեղեկությունների փոխանակումը, մասնավորապես, վերաբերում է հետևյալին՝

ա) կառուցվածքների եւ տեխնոլոգիաների արդյունավետությանը՝ կապված արտանետումների հետ, որն ընդգրկում է, անհրաժեշտության դեպքում, կարճաժամկետ ու երկարաժամկետ միջին արտանետումները եւ համապատասխան Ելակետային պայմանները, հումքի սպառումը եւ բնույթը, ջրի սպառումը, էներգաօգտագործումն ու թափոնների գոյացումը.

բ) օգտագործվող տեխնոլոգիաներին, դիտանցմանը, բնական միջավայրերի միջեւ ազդեցություններին, տնտեսական եւ տեխնիկական կենսունակությանն ու դրա զարգացմանը:

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի օրենսդրության մեջ չկան ԼՀՏ-ի կիրառման պահանջներ: Առաջին անգամ ԼՀՏ հասկացությունը սահմանվել է մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի փոփոխություններում 27.12.2011թ.: <<ԼՀՏ-ները դրանք՝ գիտատեխնիկական ժամանակակից նվաճումների վրա հիմնված արտադրական տեխնոլոգիական լուծումներ, գործընթացներ և ռեժիմներն են, որոնք հաստատել են իրենց գործնական կիրառելիությունը, և որոնց կիրառումը նպաստում է բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործմանը և շրջակա միջավայրի վրա (մթնոլորտ, ջրային օբյեկտներ, հողային ծածկույթ, կենսոլորտ) վնասակար ներգործության նվազեցմանը>> այնուամենայնիվ ոչ մի պարտականություններ կամ ժամկետներ սահմանված չեն:

Արտանետումների և արտահոսքերի նորմավորումը, թափոնների ձևավորումը կապված չեն արտադրական տեխնոլոգիաների հետ: Արտանետման , արտահոսքի կամ թափոնների նվազեցման անհրաժեշտության դեպքում, ուսումնասիրվում են միայն այն միջոցառումները, որոնք ուղղված են արտանետման որսմանը, կեղտաջրերի մաքրմանը, բայց ոչ մի կերպ չի դիտարկվում նոր և առաջադեմ ռեսուրսային տեխնոլոգիաների կիրառումը: Ավելին, 1988 թվականի ավերիչ երկրաշարժից, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, Հայաստանի արդյունաբերական ոլորտն անկում ապրեց: Դադարեցին գործել խոշոր կազմակերպությունները: Հետագայում դրանք վերսկսեցին իրենց աշխատանքները, բայց մասամբ, և աշխատում են ընդհատումներով: Դրանց մեծ մասը պատկանում է մասնավոր ոլորտի, հաճախ տեղափոխվում են, հետևաբար , երկարաժամկետ ծրագրեր չեն կառուցվում:

Նույնը վերաբերվում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման կարգին, որտեղ չկան ոչ մի պահանջներ առաջարկվող տեխնոլոգիաներին, հետևաբար, չկան նաև ԼՀՏ-ի կիրառման համար պահանջներ:

2.6. Ջերմոցային գազերի արտանետումները

ա. Եթե որեւէ կառուցվածքից ջերմոցային գազերի արտանետումները նշված են Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ սահմանող՝ 2003/87/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում՝ կապված այդ կառուցվածքում իրականացվող գործունեության հետ, թույլտվությունը չպետք է ներառի այդ գազի արտանետումների համար նախատեսված արտանետումների սահմանային թույլատրելի քանակություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ապահովել, որ տեղի շրջակա միջավայրը զգալիորեն չի աղտոտվի:(հոդված 9)

բ. 2003/87/ԵՀ I հրահանգի հավելվածում նշված գործունեության համար անդամ պետությունները կարող են պահանջներ չսահմանել ` այրման կայանների կամ շրջակա միջավայր անխաթառ գազ արտանետող այլ կայանների համար էներգետիկ արդյունավետության մասով:

գ. Իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար փոփոխում են թույլտվությունը:

դ. 1-3-րդ ենթապարբերությունները չեն կիրառվում 2003/87/ԵՀ հրահանգի 27-րդ հոդվածի Միության շրջանակներում վաճառվող՝ ջերմոցային գազերի արտանետումների թույլտվության համակարգից ժամանակավորապես բացառված կառուցվածքների նկատմամբ:

Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանը այն երկրներից չէ, որոնք մտնում են կլիմայի փոփոխության մասին Շրջանակային Կոնվենցիայի 1 Հավելվածի մեջ, ուստի պարտավոր է Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի աջակցության դեպքում կազմել և ներկայացնել ջերմոցային գազերի կադաստրեր: Հայաստանի Հանրապետությունը կազմել և ներկայացրել է կոնվենցիայի քարտուղարությանը, երկու ազգային հաղորդագրություն: Այժմ իրականացվում են երրորդ ազգային հաղորդագրության նախապատրաստական աշխատանքները, որը ավարտին կհասցվի 2014 թվականին: Ազգային հաղորդագրության շրջանակներում անպայման ներառվում է ջերմոցային գազերի կադաստրի պատրաստումը և ներկայացումը: Ջերմոցային գազերի կադաստրերը կազմված են 1990, 1994-2006 թվականներին, իսկ 1990 և 2000 թվականներին դրանք հիմք են հանդիսացել առաջին և երկրորդ ազգային կադաստրերի համար:

Հայաստանի օրենսդրության մեջ չկան գույքագրման և ջերմոցային գազերի արտանետումների հաշվետվության ներկայացման պահանջներ: Ըստ այդմ, ջերմոցային գազերի արտանետումներն չունեն նորմեր:

2.7. Թույլտվության տալու գործընթացում հասարկության մասնակցությունը և տեղեկատվության հասանելիությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությանը տրվեն արդյունավետ հնարավորություններ՝ վաղ փուլում մասնակցելու հետեւյալ ընթացակարգերին՝

ա) նոր կառուցվածքների շահագործման թույլտվության տրամադրում.

բ) ցանկացած էական փոփոխության համար թույլտվության տրամադրում.

գ) կառուցվածքի համար թույլտվության տրամադրում կամ թարմացում, եթե առաջարկվում է 15(4) հոդվածի կիրառումը.

դ) թույլտվության կամ թույլտվության տրամադրման պայմանների թարմացում՝

համաձայն 21(5)(ա) հոդվածի: IV հավելվածում նշված ընթացակարգը կիրառվում է նման մասնակցությունն ապահովելու նպատակներով:

2. Եթե ընդունվել է թույլտվության տրամադրման, վերանայման կամ թարմացման մասին որոշում, ապա իրավասու մարմինը (ա), (բ) եւ (գ) կետերի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները մատչելի է դարձնում հանրությանը, այդ թվում՝ համացանցի միջոցով

ա) որոշման բովանդակությունը՝ ներառյալ թույլտվության պատճենը, եւ հետագա թարմացված տարբերակները.

բ) որոշման հիմքում ընկած պատճառները.

գ) որոշումն ընդունելուց առաջ անցկացված խորհրդակցությունների արդյունքները եւ բացատրություն, թե ինչպես են դրանք հաշվի առնվել այդ որոշման մեջ.

դ) տվյալ կառուցվածքին կամ գործունեությանը համապատասխան ԼՃՏ ելակետային փաստաթղթերի անվանումը.

ե) ինչպես են սահմանվել 14-րդ հոդվածում նշված թույլտվության պայմանները՝ ներառյալ արտանետումների սահմանային թույլատրելի քանակությունները՝

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

կապված լավագույն հասանելի տեխնոլոգիաների հետ, եւ այդ տեխնոլոգիաներին հատուկ սահմանային թույլատրելի քանակությունները.

զ) եթե շեղում է թույլատրվում՝ 15(4) հոդվածի համաձայն, ապա շեղման հիմքում

ընկած որոշակի պատճառները՝ այդպարբերությամբ սահմանված չափորոշիչների հիման վրա եւ սահմանված պայմանները:

3. Իրավասու մարմինը, կապված առնվազն (ա) կետի հետ, հանրությանը, այդ թվում՝ համացանցի միջոցով, նաեւ հասանելի է դարձնում հետեւյալը

ա) համապատասխան տեղեկություններ այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են օպերատորի կողմից՝ 22-րդ հոդվածի համաձայն գործունեության վերջնական դադարեցումից հետո.

բ) թույլտվության պայմաններով սահմանված արտանետումների դիտանցման

արդյունքները, որոնք առկա են իրավասու մարմնի մոտ:

4.1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները կիրառվում են 2003/4/ԵՏՀ հրահանգի 4 (1) եւ (2) հոդվածում սահմանված սահմանափակումներով:

Հայաստանի Հանրապետությունում

Մթնոլորտային օդի պահպանության օրենքում չկան սահմանումներ, հանրությանը տեղեկացնելու և թույլտվության հանձնման գործընթացում նրա մասնակցության մասին, չնայած որ մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը նախատեսում է հանրության մասնակցությունը մթնոլորտային օդի պահպանության միջոցառումների իրականացմանը (հոդված 9):

Միևնույն ժամանակ, կառավարության որոշման համաձայն, ՍԹԱ-ները ներկայացվում են ԲՊՆ-ի համապատասխան ինտերնետային էջում, ինչպես նաև բոլոր համաձայնեցման գործողությունները և թույլտվության հանձնման որոշումը:

Սահմանումներ կան << Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման>> ՀՀ օրենքում, որոնք հիմնված են Օրհուսի կոնվենցիայի << շրջակա միջավայրի հետ կապված հարցերում տեղեկությունների մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> պահանջների վրա:

Օրենքի համաձայն հասարակությանը, շահագրգիռ կողմերին և տեղական ինքնակառավարման մարմիններին տեղյակ են պահվում՝

- դիմման հայտը ներկայացնելու փուլում,
- ՇՄԱԳ-ի հաշվետվության և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրման փուլում,

- բնապահպանական փորձաքննության եզրակացության նախագծի մշակումից հետո:

Բոլոր երեք փուլերն էլ եզրափակվում են հասարակական լուսններով և լուսնների մասնակիցների կարծիքների ներկայացմամբ: Սակայն, չկան հստակ չափանիշներ, առաջարկները կամ առարկությունները հաշվի առնելու համար:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

3. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ N 2010/75/EC ԴԻՐԵԿՏԻՎԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ստորև, աղյուսակ 3-ում, ներկայացված են Դիրեկտիվի դրույթները և դրանց համապատասխան Հայաստանի նորմատիվային պահանջներն ու պրակտիկան:

Աղյուսակ 3.

Սահմանումն ըստ Դիրեկտիվի	Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան
Ընդհանուր դրույթներ	ՀՀ մթնոլորտային օդի որակի և ԱՆ արտանետումների կառավարման մասին օրենսդրության հիմնական դրույթները համապատասխանում են եվրոպական Դիրեկտիվի սկզբունքներին
Սահմանումներ	Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Դիրեկտիվի հիմնական սահմանումներն համապատասխանում են ՀՀ օրենսդրության մեջ կամ պրակտիկայում ընդունված հասկացություններին: Բայց կան նաև հիմնարար տարբերություններ: Հիմնական անհամապատասխանությունը, դա արտանետումների մակարդակների կամ հիմնական ցուցանիշների նորմատիվային սահմանումների բացակայությունն է:
Թույլտվություն ստանալու պայմաններ	Նորմատիվային ակտերում սահմանված արտանետման թույլտվություն ստանալու համար պահանջները հիմնականում համապատասխանում են EC 2010/75/EC Դիրեկտիվի դրույթներին:
Թույլտվության տալը	Թույլտվություն տալու գործընթացը բավարարում է Դիրեկտիվի հիմնական պահանջները: Հիմնական տարբերությունը, դա այն է, որ ՀՀ-ում թույլտվությունները տրվում են առանձին տեսակի ոլորտներին և չկա համալիր մոտեցում:
Ընդհանուր պարտադիր նորմեր	Որոշակի կատեգորիայի կայանքների, այրման գործարանների, թափոնների այրման կամ թափոնների համատեղ այրման կայանքների համար պահանջները, որպես ընդհանուր պարտադիր նորմեր, կիրառվում են բնապահպանական փորձաքննության ժամանակ:
Միջադեպեր և վթարներ	Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենքի, նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ-ի հաշվետվություններում, պետք է ներկայացվեն միջոցառումներ, որոնք կնպաստեն արտակարգ իրավիճակներում (վթարներ, բնական աղետներ) շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության նվազեցմանը: ՄԹԱ նախագծերում պահանջվում է մշակել միջոցառումներ՝ համազարկ (վթարային) արտանետումների կանխարգելման և անբարենպաստ եղանակային պայմանների համար:
Անհամապատասխանություն	Բնապահպանական պետական տեսչությունը վերահսկում է թափոնների ձևավորման, արտանետումների և արտահոսքերի թույլտվությամբ սահմանված պահանջների կատարումը:
Ջերմոցային գազերի արտանետումներ	ՀՀ-ն չունի ՋԳ-ի վերաբերյալ պահանջներ, ՋԳ-ի արտանետումները չեն նորմավորվում և դրանց համար թույլտվություններ չեն տրվում:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրամիությունը և Եվրոպական պառլամենտը ընդունել են նաև այլ Դիրեկտիվներ, որոնք կարգավարում են օդի որակը կառավարման առանձին ուղղություններ: Աղյուսակ 4-ում ներկայացված են այդ Դիրեկտիվների հիմնական դրույթները և դրանց համապատասխան Հայաստանի նորմատիվային պահանջները և պրակտիկան:

Աղյուսակ 4.

<i>Սահմանումն ըստ Դիրեկտիվի</i>	<i>Հայկական օրենսդրությունը/ընթացիկ պրակտիկան</i>
Ազգային սահմանային արտանետումների (2001/81/EEC) Դիրեկտիվի նպատակն է սահմանել ազգային սահմանային արտանետումներ, և սահմանափակել մթնոլորտային օդում ծծմբային թթուների, ազոտի բաղադրությունը, ՑՕՄ-ը և օզոնի ձևավորման նախանշանակները՝ 2010-2020 թվականների ընթացքում, մոնիթորինգային չափումների հիման վրա	Մթնոլորտային օդում ծծմբային թթուների, ազոտի բաղադրության, ՑՕՄ-ի և օզոնի ձևավորման նախանշանակների սահմանափակման համար հատուկ ազգային արտանետումների մակարդակների նորմատիվային ակտեր չկան:
Seveso (2012/18/EU) Դիրեկտիվի նպատակն է նախազգուշացնել արտադրամասերում վնասակար նյութերի օգտագործման պատճառով զգալի չափով վթարների մասին և նվազեցնել դրանց ազդեցությունը մարդկանց և ՇՄ-ի վրա (առաջին հերթին Seveso I: Council Directive 82/501/EEC լրացումներով Seveso II: Council Directive 96/82/EC,, Seveso III 2001/81/EEC ընդհանրացրեց և փոխարինեց նախորդին)	Արդյունաբերական վթարների հետ կապված հարցերը կարգավորվում են << Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կառավարման մասին>> ՀՀ օրենքով :
Բնապահպանական կառավարման Համակարգի և (ՅՄԱՑ) (761/2001/EC) աուդիտի մասին Դրույթը սահմանում է բնապահպանական ոլորտների մոնիթորինգի կարևորությունը, բնապահպանական ազդեցությունների նվազեցումը, և տարբեր բնապահպանական խնդիրների լուծման համար համալիր մոտեցման կիրառումը: Դա հիմնականում կառավարվում է էկոմենեջմենթի և էկոաուդիտի գործունեության շնորհիվ:	Բնապահպանական կառավարման և աուդիտային համակարգի հատուկ նորմատիվային ակտեր չկան:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

Աղյուսակ 4-ի շարունակությունը

<i>Մահմանումն ըստ Դիրեկտիվի</i>	<i>Հայկական օրենսդրություն/ Գոյություն ունեցող պրակտիկա</i>
<p>Մի շարք Դիրեկտիվներ սահմանում են մթնոլորտային օդ արտանետումների հատուկ հսկողություն: Մթնոլորտային օդի որակի մասին (2008/50/EC) Դիրեկտիվի նպատակն է սահմանել մթնոլորտային օդի որակի նոր նպատակներ և չափանիշներ, այդ որակի գնահատումը, օդի որակի մասին հասարակությանը տեղեկատվության տրամադրումը և օդի որակի պահպանման միջոցառումների զարգացումը և իրականացումը: Մթնոլորտային օդի որակի Շրջանակային Դիրեկտիվը պետք է հիմնվի սարքավորման համար տրված համալիր բնապահպանական թույլտվությունների վրա:</p>	<p>Արտանետումների վերահսկման և մթնոլորտային օդի որակի հետ կապված հարցերը կարգավորվում են համաձայն <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> և <<Բնապահպանական հսկողության մասին>> ՀՀ օրենքների (տես նախորդ բաժինները)</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման՝ ՇՄԱԳ-ի (2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment) Դիրեկտիվը, պահանջում է որոշակի նախագծերի ժամանակ իրականացնել բնապահպանական գնահատում: Նման գնահատումների արդյունքներից ստացված տեղեկությունները օգտագործվում են համալիր բնապահպանական թույլտվությունների պայմանների որոշման ժամանակ: Համաձայն 2011/92/EU Դիրեկտիվի, ՇՄԱԳ-ը պետք է ներկայացնի հետևյալ կետերի նկարագրությունը և գնահատի դրանց վրա ազդեցությունը՝ ա) բնակչության, բուսական և կենդանական աշխարհի, բ) հողի, ջրի , օդի, կլիմայի և ռելիեֆի, գ) նյութական արժեքների և մշակութային ժառանգության, դ) ա),բ) և գ) կետերում նշված օբյեկտների միջև փոխազդեցության:</p>	<p>Նախատեսվող գործունեության համար շրջակա միջավայրի վրա ազդեցության , հայեցակարգերի և ծրագրերի գնահատման կազմակերպչական և տնտեսական հիմքերը կառավարվում են համաձայն << Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին>> ՀՀ օրենքի: Օրենքով սահմանված են փարձաքննության անցկացման կարգը, ներկայացվող տեղեկությունների պահանջները, գործունեության տեսակները, որոնք ենթարկվում են բնապահպանական փորձաքննության: Որոշ տեսակի գործունեությունների սահմանային արժեքները սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ: Այնուամենայնիվ չկան փորձաքննության անցկացման նորմեր և ընթացակարգեր, որոնք կտարբերվեն գործող օբյեկտների փորձաքննությունից (աուդիտ, ստուգում):</p>

Հավազույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

5. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2010/75/EU ԴԻՐԵԿՏԻՎԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ Բնապահպանության նախարարությունում, 2013թվականի հունվարի 15-ին սկսվեց համակարգային ամրապնդման թվինինգ ծրագիրը, որի նպատակն է ադոտովածության համալիր կանխարգելումն ու վերահսկումը: Ծրագիրը ֆինասավորվում է ԵՄ-ի (AM10/ENP-PCA/EN/06-German/Spanish/Armenian Twinning Project) կողմից: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Բնապահպանության նախարարությանը՝ որպես առաջատար շահառու հաստատություն, այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցության միջոցով, ներդնել շրջակա միջավայրի ադոտման համալիր կանխարգելման և հսկման համակարգ՝ համալիր թույլտվությունների տրամադրման և հսկման համար օրենսդրական, ենթակառուցվածքային, վարչական և ընթացակարգային համակարգ մշակելու և ներգրավված պետական կառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի կարողությունների ամրապնդմանն անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու միջոցով: Թվինինգ ծրագրի միջոցառումները ներառված են հետևյալ 4 բաղադրիչներում՝

Բաղադրիչ 1. Ադոտման համալիր կանխարգելման և հսկման համակարգի ներդրման համար օրենսդրական հենքի մշակում:

Բաղադրիչ 2. Համալիր թույլտվությունների տրամադրման և վերահսկման մեխանիզմների ենթակառուցվածքների ամրապնդում:

Բաղադրիչ 3. ՀՀ Բնապահպանության նախարարության և հիմնական շահագրգիռ կողմերի՝ միասնական թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի, հսկողության, վերահսկողության և իրավակիրարկման կարողությունների հզորացում՝ լայնածավալ վերապատրաստման դասընթացների միջոցով:

Բաղադրիչ 4. Երկու փորձնական ծրագրերի ընտրություն և իրականացում. Փորձնական թույլտվության նախապատրաստում ու տրամադրում և մոնիթորինգի իրականացում:

Ակնկալվող արդյունքներ՝

1. ՀՀ-ում արդյունաբերական կազմակերպությունների համար ԱՀԿՎ համակարգի ներդրմանն անհրաժեշտ իրավական ակտերի առկայություն:

2. ՀՀ-ում համալիր թույլտվությունների տրամադրման և հսկման համար բարելավված և առավել ամրապնդված ինստիտուցիոնալ, այդ թվում՝ կառուցվածքային հզորությունների առկայություն:

3. Համալիր թույլտվությունների տրամադրման ընթացակարգերի հսկողության, վերահսկողության և իրավակիրարկման ոլորտում ՀՀ Բնապահպանության նախարարության և հիմնական կողմերի բարելավված կարողությունների առկայություն:

4. Համալիր թույլտվությունների տրամադրման և հսկման ոլորտում ՀՀ բնապահպանության նախարարության զարգացած և խորացված հմտությունների և փորձառությունների ձեռքբերում փորձնական ծրագրերի իրականացման միջոցով: Ծրագրի տևողությունը՝ 2 տարի, բյուջեն՝ 1 մլն. եվրո:

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

6. ՄՇԱԿՎՈՂ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Ներկայումս Հայաստանի կառավարությունում վերանայման տարբեր փուլերում գտնվում են <<Բնապահպանական ինքնակառավարման մասին>>, <<Բնապահպանական գնահատման մասին>> օրենքների նախագծերը, մի շարք օրենքներ բնապահպանության և բնության օգտագործման վերաբերյալ օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Սակայն, տվյալ օրենսդրական նախագծերը, ինչպես նաև կառավարման որոշումների մշակվող նախագծերը չունեն որոշումներ ադոպտիվաճության կանխարգելման և ադոպտիվաճության մակարդակի վերահսկման համար համալիր միջոցառումների անցկացման և 2010/75/EU արդյունաբերական արտանետումների Դիրեկտիվին համաձայն, արտանետումների սահմանային արժեքների սահմանման համար: